ՍԱՂՄՈՍ 78

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո առաջնորդու-թյունը Իր ժողովրդին, չնայած նրանց անհավատարմության	Ապստամբ Իսրայելի հանդեպ Աստծո բարությունը	Աստծո մեծ գործերի և Նրա ժողովրդի անհավատարմության պատմությունը	Աստված և Իր ժողովուրդը	Իսրայելացիների պատմության դասերը
<u>MT ներածություն</u> Ասափի խորհրդածությունը				
78:1-4				
	78:1-4	78:1-4	78:1-4	78:1-2
				78:3-4բ
				78:4գ-5բ
78:5-8				
	78:5-8	78:5-8	78:5-8	78:5գ-6բ
				78:6գ-7
				78:8
78:9-16	78:9-11	78:9-16	78:9-16	
				78:9-10
				78:11-12
	78:12-16			
				78:13-14
				78:15-16
78:17-20	78:17-20	78:17-20	78:17-20	
				78:17-18
				78:19-20
78:21-33	78:21-25	78:21-31	78:21-31	
				78:21-22
				78:23-25
	78:26-31			
				78:26-28
				78:29-31
	78:32-33	78:32-55	78:32-37	
				78:32-33
78:34-39	78:34-39			
				78:34-35
				78:36-37
			78:38-39	78:38-39
78:40-53	78:40-55			
			78:40-51	78:40-42
				78:43-44

				78:45-46
				78:47-48
				78:49-50ա
				78:50բ-51
			78:52-55	78:52-53
78:54-64				
				78:54-55
	78:56-64	78:56-66	78:56-64	
				78:56-60
				78:61-62
				78:63-64
78:65-72	78:65-66		78:65-69	
				78:65-66
	78:67-72	78:67-72		
				78:67-69
			78:70-72	78:70-72

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը հաստատում է հավատքը հաջորդ սերնդին փոխանցելու անհրաժեշտությունը (Սաղմ. 78:1-4, 5-8):
1. Աստծո գործերը
2. Աստծո հայտնությունները

Բ. Այս Սաղմոսը արձանագրում է Աստծո հավատարմության գործերը և Իսրայելի անհավատարմությանը:
1. Ելիցը
2. անապատի դեգերումը
3. նվաճումը

Գ. Հավանաբար լավագույն կերպը զուգահեռները և ակնարկները տեսնելու համար ՀԿ-ի տեքստերի հետ առնչվող համարների այս ցանկն է՝

Սաղմ. 78:12բ – Թվոց 13:22
Սաղմ. 78:13 – Ելից 14:16,21
Սաղմ. 78:14 – Ելից 13:21
Սաղմ. 78:15 – Ելից 17:6, 2 Օր. 8:15
Սաղմ. 78:16 – Թվոց 20:8,10,11
Սաղմ. 78:18 – Թվոց 11:4
Սաղմ. 78:19 – Ելից 16:3, Թվոց 11:4, 20:3, 21:5
Սաղմ. 78:20 – Թվոց 11:18
Սաղմ. 78:21 – Թվոց 11:1
Սաղմ. 78:22 – 2 Օր. 1:32, 9:23
Սաղմ. 78:24 – Ելից 16:4
Սաղմ. 78:25 – Ելից 16:3
Սաղմ. 78:26 – Թվոց 11:31
Սաղմ. 78:27 – Ելից 16:13
Սաղմ. 78:29 – Թվոց 11:19,20
Սաղմ. 78:31 – Թվոց 11:33,34
Սաղմ. 78:32 – Թվոց 14:11,16-17
Սաղմ. 78:33 – Թվոց 14:29,35
Սաղմ. 78:34 – Թվոց 21:7
Սաղմ. 78:35 – Ելից 15:13, 2 Օր. 9:26, 32:4
Սաղմ. 78:36 – Ելից 24:7,8, 32:7,8
Սաղմ. 78:38 – Ելից 34:6, Թվոց 14:20
Սաղմ. 78:41 – Ելից 14:22
Սաղմ. 78:42 – Դատ. 8:24
Սաղմ. 78:43 – Ելից 4:21, 7:3
Սաղմ. 78:45 – Ելից 8:6,24
Սաղմ. 78:46 – Ելից 10:14
Սաղմ. 78:47 – Ելից 9:23
Սաղմ. 78:48 – Ելից 9:19
Սաղմ. 78:49 – Ելից 15:7
Սաղմ. 78:50 – Ելից 12:29,30
Սաղմ. 78:52 – Եից 15:22
Սաղմ. 78:53 – Ելից 14:19,20,27,28
Սաղմ. 78:54 – Ելից 15:17
Սաղմ. 78:58 – Ելից 20:4, Ղևտ. 26:1,30, 2 Օր. 4:25, 32:16,21
Սաղմ. 78:59 – Ղևտ. 26:30, 2 Օր. 1:34, 9:19, 32:19
Սաղմ. 78:60 – 1 Թագ. 4:11
Սաղմ. 78:61 – 1 Թագ. 4:17
Սաղմ. 78:62 – 1 Թագ. 4:10
Սաղմ. 78:63 – Թվոց 11:1, 21:28
Սաղմ. 78:64 – 1 Թագ. 4:17, 22:18
Սաղմ. 78:66 – 1 Թագ. 5:6
Սաղմ. 78:69 – 3 Թագավորաց 6
Սաղմ. 78:70 – 1 Թագ. 16:12
Սաղմ. 78:71 – 1 Թագ. 10:1, 2 Թագ. 5:2, 7:8
Սաղմ. 78:72 – 3 Թագ. 9:4

Դ. Լավագույն զուգահեռը Իսրայելի անհավատարմության և ՅԱՀՎԵԻ հավատարմության Նեեմիա 9 է (նաև տես Գործք 7):

1. Աբրահամի կանչը – Սաղմ. 78:6-8
2. ելից – Սաղմ. 78:9-14
3. անապատի դեգերումները – Սաղմ. 78:15-21
4. նվաճումը – Սաղմ. 78:22-25
5. դատավորները – Սաղմ. 78:26-31

Նաև ուշադրություն դարձրե՛ք, որ Սաղմոսներ 105-106 նույնպես Աստծո հավատարմության և Իսրայելի անհավատարմության վերաբերյալ են:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 78:1-4

[1]Ակա՛նջ դրեք Իմ օրենքին, ո՛վ Իմ ժողովուրդ,
Խոնարհեցե՛ք ձեր ականջները բերանիս խոսքերին:
[2]Առակով եմ բացելու Իմ բերանը.
Հին ժամանակի մութ բաներն եմ հայտնելու:
[3]Որոնք լսեցին ու իմացանք, և մեր հայրերը մեզ պատմեցին:
[4]Մենք դրանք չենք թաքցնի արդիներից՝
Գալիք սերնդին պատմելով ՏԻՐՈՋ փառաբանությունները,

Նրա զորությունն ու Նրա կատարած հրաշալի գործերը:

78:1-4 Սաղմոսերգուն աղաչում է ուխտի ժողովրդին, որ պատշաճ կերպով լսեն և պատասխանեն Աստծո հայտնությանը (տես՝ Սաղմ. 78:4գ): Նա նաև աղերսում է նրանց, որ ճշմարտությունները փոխանցեն իրենց երեխաներին և թոռներին և այդպես շարունակ՝ սովորեցնելով նոր սերնդին (տես՝ 2 Օրինաց 4:9-10, 6:7, 20-25, 11:19, 32:46):

78:1 Կան երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ՝

1. ակա՛նջ դրեք (բառացի՝ «լսեք») – BDB 24, KB 27, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. խոնարհեցրե՛ք ձեր ականջները (բառացի՝ «դարձրեք») – BDB 639, KB 692, *Hiphil* ՀՐԱՄԱ-ՅԱԿԱՆ:

❖ **«օրենք/խրատ»** Սա բառացիորեն նշանակում է «ուսմունք» (BDB 435): Սա զուգահեռ է «իմ բերանի խոսքերը» արտահայտությանը: Գոյություն ունեն մի քանի եբրայերեն բառեր, որոնք այս Սաղմոսում կիրառվում են ՅԱՀՎԵԻ հայտնության համար:

1. խրատ/ուսմունք, Սաղմ. 78:1 – BDB 435
2. վկայություն, Սաղմ. 78:5 – BDB 730
3. օրենք, Սաղմ. 78:5,10 – BDB 435
4. պատվիրան, Սաղմ. 78:7 – BDB 846
5. վկայություններ, Սաղմ. 78:56 – BDB 729 I

Այս Սաղմոսը գրվել է ուխտի ժողովրդի համար (սովորաբար Սաղմոսները ուղղված են Աստծուն): Կարծես թե այս պատմական ակնարկը կիրառվել է (ընթերցվել) տաճարում ամենամյա տոներին կամ ծեսերի ժամանակ, որպեսզի քաջալերի Աստծո ժողովրդին անցյալից դասեր քաղելու և որպես Աստծո ժողովուրդ ճիշտ ապրելու համար:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ</u>

78:2 «առակներ. . . մութ բաներ»

1. առակ – BDB 605
2. մութ բաներ՝ խոսքեր – BDB 295

Այս երկու բառերի ԲԱՅԻ և ԳՈՅԱԿԱՆԻ ձևերը գտնվում են Եզեկիել 17:2-ում: Ստորև ներառել եմ Եզեկիել 17:2-ից իմ գրառումները:

Եզեկ. 17:2 Այս համարն ունի երկու զուգահեռ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ:

1. «հանելուկ առաջադրիր», BDB 295, KB 295, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Դատ. 14:12-19
2. «առակ խոսիր», BDB 605 II, KB 647, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ 12:23, 16:44, 17:2, 18:2, 20:49, 24:3

«Հանելուկ» (BDB 295, ուշադրություն դարձրե՛ք ԲԱՅԻ՝ BDB 295, և ԳՈՅԱԿԱՆԻ՝ BDB 295, կապին) տերմինը նշանակում է մի վիճակ, որին անհրաժեշտ է ունենալ որոշակի տեղեկություն՝ կանարկվող կամ ապահովված, որպեսզի հասկացվի (տես՝ Առակ. 1:6):

«Առակ» (BDB 605 II, ուշադրություն դարձրե՛ք ԲԱՅԻ՝ BDB 605 II, և ԳՈՅԱԿԱՆԻ՝ BDB 605 II, կապը) տերմինը վերաբերում է մի հակիրճ բանաստեղծական կառուցվածքի, հավանաբար առակի, որն օգտագործում է համեմատությունը որպես ճշմարտությունը լուսաբանելու միջոց:

Եզեկիելը օգտագործում էր չափազանց փոխաբերական լեզու, որպեսզի համոզի գերիներին Երուսաղեմի արդար և հաստատ դատաստանի համար:

ՅԱՀՎԵՆ չի փորձում ծածկել ճշմարտությունը, այլ հաստատում է, որ հասկացողության գաղտնիքը գալիս է Նրա խոսնակներից՝ մարգարեներից: Աստծո անցյալի գործերը անհրաժեշտ է մեկնել թարմ կերպով յուրաքանչյուր սերնդի համար:

Հիսուսը մեջբերում է այս համարը Մատթևոս 13:35-ում: Նա այդ օգտագործում է բացատրելու, թե ինչու ամբոխները չէին հասկանում Նրա ուսմունքները: Նա նույնպես վերամեկնաբանում էր

Իսրայելի անցյալը: Նա պնդում էր, որ Իսրայելի պատմության մեծագույն թիրախը Ինքն էր: Այդուհանդերձ, այս հրաշալի ճշմարտությունը անմիջապես չընդունվեց, այլ դեռ պետք էր, որ այն բացահայտվեր: Նա էր ճշմարիտ, վերջնական հայտնողը (տես՝ Մատթ.5:17-19, 21-48): Ինչպես որ Իսրայելը մերժեց տեսնել ՅԱՀՎԵԻ կամքը և նպատակն իր պատմության մեջ, այնպես էլ Հիսուսի սերունդը իրականացրեցին Եսայի 6:9-10, 29:13 մարգարեությունները: Նրանք Սաղմ.78:8-ի իսրայելացիների պես էին:

78:4 Յուրաքանչյուր սերունդ պետք է սովորեցնի իրենց երեխաներին Աստծո մասին: Սա պարբերաբար կրկնվող թեմա է 2 Օրինացում: Ես ներառել եմ 2 Օրինաց 4:9 և 6:7-ից իմ գրառումները:

4:9 «սովորեցնեն իրենց երեխաներին» Սա 2 Օրինացում հաճախ կրկնվող թեմա է (տես՝ 2 Օր.4:10, 6:7, 20-25, 11:19, 31:13, 32:46, և նկատե՛ք Ելից 10:2, 12:26, 13:8, 14): Եթե հավատացյալները չեն սովորեցնում իրենց երեխաներին Աստծո մասին, նրանք որպես ծնողները ձախողել են (սուրբգրային լեզվով ասած): Հավատքը փոխանցվում է ընտանիքների միջոցով (տես՝ 2 Օր.5:10, 7:9):

6:7 «ջանասիրաբար ուսուցանիր դրանք քո որդիներին» ԲԱՅԸ (BDB 1041, KB 1606, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նշանակում է «սրել» և *Piel*-ում սա միակ կիրառությունն է: Ուգարտերենում այս տերմինը նշանակում է «կրկնել»: Սա կարծես թե այս համարի հիմնական շեշտադրումն է: Ռաբբիներն այս համարն օգտագործում են պնդելու, որ *Շեման* պետք է «կրկնվի» առավոտյան և երեկոյան: Մենք պետք է խոսենք Աստծո կամքի մասին մեր կյանքերում՝ մեր ամենօրյա գործունեությունների ընթացքում: Ծնողների պատասխանատվությունն է հավատքի ապրելակերպը փոխանցելը (տես՝ 2 Օր.4:9, 6:20-25, 11:19, 32:46, տես ամբողջական գրառումը 4:9-ում): Հետաքրքիր է, որ ուսուցանելու վերաբերյալ այս տարբեր ժամանակների հոսքը լցվում է միևնույն գրականական ժանրի մեջ, ինչպես Սաղմ.139:2-6 և Առակ.6:20-22: Այս շեշտադրումը դրված ծնողական պատասխանատվության վրա կրկնվում է Առակ.22:6-ում: Մեր արդի օրերում եկեղեցու դպրոցը չի կարող գրավել ծնողների կողմից դաստիարակության տեղը, սակայն անշուշտ կարող է լրացնել այն:

❖ **«Նրա զորությունը և Նրա կատարած հրաշալի գործերը»** Այս Սաղմոսն ունի մի քանի տարբեր տերմիններ, որոնք նկարագրում են ՅԱՀՎԵԻ հայտնության և փրկության գործերը:

1. Սաղմոս 78:4
   ա.փառավոր գործերը (բառացի՝ «փառաբանությունները») – BDB 239, #4, տես՝ Սաղմ.9:14, 35:28, 79:13, 102:21, 106:2,47, Եսայի 43:21, 60:6, 63:7
   բ.Նրա զորությունը – BDB 739, տես՝ Սաղմ.145:6
   գ.Նրա հրաշալի գործերը – BDB 810, KB 927, *Niphal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Միքիա 7:15, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՔԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ</u>
2. Սաղմոս 78:7 – Աստծո գործերը – BDB 760, տես՝ Սաղմ.77:11, 12, Միքիա 2:7
3. Սաղմոս 78:7
   ա. Նրա գործերը – BDB 760, նույնը ինչ #2 և 32 համարը:
   բ. Նրա հրաշքները – BDB 810, նույն ինչ #1 գ
4. Սաղմոս 78:12 – Նրա հրաշքները – BDB 810, նույնը ինչ #1, գ
5. Սաղմոս 78:32 – Նրա հրաշալի գործերը – BDB 810, նույնը ինչ #1, գ և Սաղմոս 78:11
6. Սաղմոս 78:42 – Նրա զորությունը (բառացի՝ «ձեռքը») – BDB 388, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ</u>
7. Սաղմոս 78:43
   ա.Նրա նշանները – BDB 16, #4, տես՝ Ելից 10:2, Սաղմ.65:8
   բ. Նրա սքանչելիքները – BDB 68, #1, տես՝ 2 Օրին.4:34, 6:22, 7:19, 26:8, 29:2, 34:11, Նեեմ.9:10, Սաղմ.105:27, 135:9, Երեմ.32:20-21
8. Սաղմ.78:54 – Նրա աջ ձեռքը շահեց – BDB 411, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ</u>

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 78:5-8

5Քանի որ վկայություն հաստատեց Հակոբի մեջ
Ու օրենք դրեց Իսրայելում,
Որ պատվիրեց մեր հայրերին, որպեսզի սովորեցնեն իրենց որդիներին.
6Որպեսզի գալիք սերունդն ու մանուկները, որ ծնվելու են,
Իմանան ու պատմեն իրենց զավակներին.
7Նրանք էլ իրենց հույսը Աստծո վրա դնելով,
Չմոռանան Աստծո գործերը,
Այլ Նրա պատվիրանները պահեն
8Ու իրենց հայրերի պես խստավիզ ու ապստամբ սերունդ չլինեն,
Մի սերունդ, որ իր սիրտը չուղղեց,
Ում հոգին հավատարիմ չէ Աստծուն:

78:5-8 Այս պարբերությունը շեշտադրում է յուրաքանչյուր սերնդի մեջ հավատարիմ հետևորդների կարիքը, ովքեր իրենց հավատքը և Աստծո կամքի հասկացողությունը կփոխանցեն իրենց ընտանիքներին (տես՝ Սաղմ. 78:4-ի գրառումը):

Հավատարիմ հետևորդները բնութագրվում են որպես՝

1. Իրենց վստահությունը Աստծո վրա դնողներ (բառացի՝ «հույսը», BDB 492)
2. Նրա գործերը չմոռացող, տես՝ 2 Օրինաց 4:9, 23, 31:6,12, 8:11, 14, 19 (երկու անգամ), 9:7, 25:19
3. Նրա պատվիրանները պահողներ, տես՝ 2 Օրինաց 4:2, 6, 10, 5:1, 10, 29, 32, 6:2,3, 17, 25, 7:9, 11, 12, 27:1, Հեսու 22:5

Սաղմոս 78:7 ամբողջ Սաղմոսների մեջ դրական թեմա է, իսկ 78:8 հզոր զգուշացում է, թե ինչ չպետք է անել:

78:8 Անգամ բոլոր այն բաներից հետո, որ ՅԱՀՎԵՆ արել էր Աբրահամի ժառանգների համար, նրանք անհավատ էին (տես՝ 2 Մնաց. 30:7, Եզեկ. 20:13, 18): Սաղմ. 78:8 հակադրում է հավատարիմներին անհավատների հետ:

1. համառ – BDB 710, KB 770, *Qal* ԴԵՐԲԱՑ, տես՝ 2 Օր. 9:6,13, 10:16, 31:27
2. ապստամբ – BDB 598, KB 632, *Qal* ԴԵՐԲԱՑ, տես՝ 2 Օր. 9:34, 31:27
3. չպատրաստեցին իրենց սրտերը – BDB 465, KB 464, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 78:37
4. որոնց հոգին Աստծուն հավատարիմ չէր – BDB 52, KB 63, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 78:9-16

9Եփրեմի որդիները, որ զինյալ աղեղնավորներ էին,
Պատերազմի օրը ետ դարձան,
10Աստծո ուխտը չպահեցին ու չուզեցին Նրա օրենքով ընթանալ
11Ու մոռացան Նրա գործերը ու Նրա հրաշքները,
Որ ցույց էր տվել նրանց:
12Նրանց հայրերի առջև հրաշալի գործեր կատարեց՝
Եգիպտոսի երկրի՝ Տայանիսի դաշտի մեջ:
13Ծովը ճեղքեց ու նրանց անցկացրեց,
Իսկ ջրերն էլ պատնեշի պես կանգնեցրեց:
14Ցերեկը ամպով նրանց առաջնորդեց
Եվ ամբողջ գիշեր՝ կրակի լույսով:
15Վեմերը ճեղքեց անապատում ու խմեցրեց նրանց՝
Ասես մեծ հեղեղներից:
16Առուներ բխեցրեց վեմից ու ջրերը գետերի պես հոսեցրեց:

78:9-16 Այս պարբերությունը ակնարկում է ելիցը: Ակնարկներից մի քանիսը հստակ չեն (տես՝ Սաղմ. 78:9), սակայն շատերը (Համատեքստային Հասկացություններ, Գ) շատ հստակ են:

Եփրեմը հնարավոր է Հյուսիսային Ցեղերին նկատի ունենալու մի կերպ է: Հովսեփը և Հեսուն երկուսն էլ հանդիսանում էին Եփրեմի ցեղից, որը թվաքանակով ամենամեծն էր ցեղերի մեջ: Եփրեմն ու Մանասեն Հովսեփի որդիներն էին՝ եգիպտացի մորից: Հակոբը օրհնեց Եփրեմին գերադասելով նրան անդրանիկ Մանասեից (տես՝ Ծննդ. 48:14-20):

78:10 Նկատե՛ք, որ «պահել» (BDB 1036, KB 1581, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, ժխտված) ԲԱՅԸ և «քայլել» (BDB 229, KB 246) զուգահեռներ են և նկարագրում են ուխտի ապրելակերպը: Մովսիսական ուխտի հնազանդությունը կարևոր նշանակություն ուներ (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30):

78:11 Իսրայելացիների տվյալ պահի սերունդը մոռացել էին ամեն ինչ, որ ՅԱՀՎԵՆ արել էր նրանց համար ելիցի ընթացքում (տես՝ 2 Օրինաց 8:11-20): Ուստի հաջորդող շատ համարներում թվարկվում են ՅԱՀՎԵԻ ազատագրման զորավոր գործերը:

78:12 «Տայանիս/ Զոան» Այս տերմինը (BDB 858) եգիպտական «ամրություն» արմատից է: Այս ամրությունը՝ ամրոցը տեղակայված էր Եգիպտոսի Դելտա տարածաշրջանում, որը նաև հայտնի որպես Գեսեմ (Նեղոսի արևելյան Դելտան), որտեղ բնակեցվեցին իսրայելացիները Հովսեփի օրոք: Քաղաքը տարբեր ժամանակաշրջաններում հայտնի է եղել իր տարբեր անուններով՝

1. Զոան (տես՝ Թվոց 13:22)
2. Տայանիս
3. Ավարիս
4. Ռամսես (կոչվել է Ռամսես II-ի անունով, տես՝ Ելից 1:11, 12:37, Թվոց 33:3):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 78:17-20
[17]Բայց նրանք ավելի մեղանչեցին Նրա դեմ
Ու անապատում բարկացրին Բարձրյալին:
[18]Եվ իրենց սրտերում Աստծուն փորձեցին՝
Կերակուր ուզելով՝ իրենց ցանկության համար:
[19]Հիրավի, նրանք Աստծո դեմ խոսեցին ու ասացին.
«Մի՞թե Աստված կարող է անապատի մեջ սեղան պատրաստել:
[20]Ահա խփեց վեմին ու ջրերը բխեցին, ու վտակներ հորդեցին.
Արդյոք կարո՞ղ է հաց էլ տալ, կարո՞ղ է միս հայթայթել Իր ժողովրդի համար»:

78:17-20 Այս պարբերությունը շարունակում է նկարագրել ելիցի և անապատում դեգերելու շրջանում երախտամոռ, անհնազանդ իսրայելացիների գործերը:

78:18 «Աստծուն փորձեցին» Այս ԲԱՅԸ (BDB 650, KB 702, *Piel* ԱՆԿԱՏԱՐ *yայ*-ով) մի քանի անգամ կիրառվում է Իսրայելի համար՝ Աստծուն փորձելու իմաստով (տես՝ Ելից 17:2, Թվոց 14:22, 2 Օրինաց 6:16, Սաղմ. 78:18,41,56, 95:9, 106:14):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 78:21-33
[21]Դրա համար էլ, երբ ՏԵՐԸ լսեց, զայրացավ,
Կրակ բորբոքվեց Հակոբի դեմ,
Նաև՝ բարկություն Իսրայելի վրա.
[22]Քանի որ Աստծուն չհավատացին ու Նրա փրկությանը չվստահեցին.
[23]Թեև Նա վերևից հրաման էր տվել ամպերին ու բացել էր երկնքի դռները:
[24]Եվ որպես կերակուր նրանց վրա մանանա էր տեղացրել
Ու երկնքի ցորենը տվել էր նրանց:
[25]Մարդիկ հրեշտակների հացը կերան.

Հագենալու չափ ուտելիք ուղարկեց նրանց:
[26]Երկնքի մեջ բարձրացրեց արևելյան քամին
Եվ Իր զորությամբ հարավային քամին բերեց:
[27]Նրանց վրա փոշու պես միս տեղացրեց,
Ծովի ավազի պես՝ թևավոր թռչուններ.
[28]Նրանց բանակատեղիի մեջ ու նրանց վրանների չորս կողմը թափեց:
[29]Կերան և լավ կշտացան, քանի որ իրենց ցանկությունն էր տվել իրենց:
[30]Իրենց ցանկությունից չէին դադարել,
Սակայն մինչ միսն իրենց բերանում էր,
[31]Աստծո բարկությունն իջավ նրանց վրա,
Ու սպանեց ամենապարարտներին
Ու տապալեց Իսրայելի ընտիրներին:
[32]Այս բոլորից հետո նորից մեղանչեցին
Ու չհավատացին Նրա հրաշալի գործերին:
[33]Ուստի ունայնության մեջ սպառեց նրանց օրերը
Եվ նեղության մեջ՝ նրանց տարիները:

78:21-33 Իսրայելի կողմից շարունակվող անհնազանդությունը հանգեցրեց նրան, որ ՅԱՀՎԵՆ դատեց նրանց: ՅԱՀՎԵԻ գերբնական հոգածության օրինակներից մեկը մսի (լորամարգիների) մատակարարումն էր: Նա նրանց ասաց ինչպես ընդունեն Իր օրհնությունը, սակայն նրանք դարձյալ անհնազանդ գտնվեցին (տես՝ Թվոց 11): Նրանց գործողությունները ցույց էին տալիս նրանց վերաբերմունքը ՅԱՀՎԵԻ հանդեպ:

1. նրանք չհավատացին, Սաղմ. 78:22
2. նրանք չվստահեցին, Սաղմ. 78:22
3. այս բոլորից հետո նորից մեղանչեցին, Սաղմ. 78:32

78:22 «հավատալ...վստահել» Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ:</u>

78:23 «երկնքի դռները բացեց» «Երկինքները» (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ</u> և <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔԸ</u>) կարծում էին, որ մի գմբեթ է ծածկված կաշվով՝ ինչպես թմբուկը: Այս գմբեթը բաժանում էր վերը գտնվող ջրերը երկրի վրա թափվող ջրերից: Նրանք պատկերացնում էին, որ ունեն պատուհաններ, որոնք կարելի էր բացել կամ փակել, կախված Աստծո կամքից և մարդկության գործերից (տես՝ Ծննդ. 7:11, Մաղ. 3:10): Աստված կարող էր ապահովել՝

1. անձրև (Ծննդոց)
2. սնունդ (Սաղմոսներ)
3. օրհնություններ (Մաղաքիա)

78:24-25 «երկնքի ցորենը... հրեշտակների հացը» Սա նկատի ունի մանանան (տես՝ Ելից 16): ՅԱՀՎԵՆ գթառատ էր (տես՝ Սաղմ. 78:38), սակայն նրանք ապստամբ էին:

Մանանան (BDB 577 I) սպիտակ հումք էր, որը հայտնվում էր ցողի պես: Անունը հավանաբար եկել է Ելից 16:15-ից՝ «Ի՞նչ է սա»: Այն հրաշքով սննդի մատակարարում էր անապատում դեգերելու շրջանում: Այն կարելի էր հավաքել միանգամից միայն մեկ օրվա համար (Աստծո ամենօրյա հոգածությունը), այլապես այն փչանում էր (տես՝ Ելից 16:16-21), բացառությամբ նախքան Շաբաթ օրը, երբ հավաքվում էր երկու օրվա համար բավարար սնունդ, և այն չէր փչանում (տես՝ Ելից 16:22-29): Այն եփվում էր ալյուրի պես: Այն դադարեց, երբ իսրայելացիները անցան Հորդանան գետը (տես՝ Հեսու 5:12):

78:27 «փոշի ... ավազ» Սրանք երեք տերմիններից երկուսն են (փոշի, ավազ, աստղեր) որոնք կիրառվում են նկարագրելու ինչ-որ անհաշիվ բան: Դրանք սովորաբար իրար հետ կապված են

Նահապետների բազմաթիվ ժառանգների առումով (այսինքն՝ Աստծո խոստումը Աբրահամին, տես՝ Ծնն. 12:2):

1. փոշի – Ծնն. 13:16, 28:14, Թվոց 23:10
2. ավազ – Ծնն. 22:17, 32:12, 2 Թագ. 17:11, 3 Թագ. 4:20
3. աստղեր – Ծնն. 15:5, 22:17, 26:4, Ելից 32:13, 2 Օր. 1:10, 10:22, 28:62

78:29-31 Աստված ապահովեց լորամարգիներ, սակայն ժողովուրդը կրկին չվստահեց Աստծո մատակարարմանը և փորձեց հավաքել մեծ քանակությամբ թռչուններ հետագա օգտագործման համար: Սա դուր չեկավ Աստծուն և Նրա դատաստանը իջավ նրանց վրա (տես՝ Թվոց 11:31-35):

Կրկին ու կրկին ՀԿ-ում Աստված խոսում էր Իր ժողովրդին, թե ինչ անեն, սակայն նրանք մերժում էին և վարվում իրենց կերպերով: Ամեն անգամ սա հանգեցնում էր դատաստանի: Խնդիրը «վստահությունն» էր: Եվ մինչև հիմա էլ դա է:

78:33

NASB, NKJV	**«ավարտվում է դատարկությամբ»**
NASB լուսանցք	**«ունայնություն, միմիայն շունչ»**
NRSV	**«շնչի պես անհետանում է»**
NJB	**«անհետանում է գոլորշու պես»**

Այս տերմինը (BDB 210 I) Ժողովողի մեջ կարևոր տերմին է: Տես ստորև տրված իմ գրառումները Ժողովող 1-ից:

Ժողովող 1:2 «ունայնություն ունայնությանց» Սա եբրայերեն գերադրական է (տես՝ 1:2 և 12:8):

Այս բառը նշանակում է «շոգի» կամ «գոլորշի» (BDB 210 I, տես՝ Հակ. 4:14): Այս խոսքի շեշտադրություն է՝

1. կամ ոչնչությունը
2. կա՛մ էլ՝ մարդկային կյանքի անցողիկությունը

Համատեքստը սատարում է վերջինը (տես՝ Հ. Ս. Լեոպոլդի *Ժողովողի բացատրական*, էջ՝ 41):

Սա կարևոր տերմին է և պարբերաբար կրկնվող արտահայտություն այս գրքում (տես՝ Ժող. 1:2, 14, 2:1, 11, 15, 17, 19, 21, 23, 26, 3:19, 4:4,7,8,16, 5:7, 10, 6:2, 4, 9, 11, 12, 7:6, 15, 8:10, 14, 9:9, 11:8,10, 12:8): Այս տերմինը իմաստասիրական մյուս գրքերում խնայողաբար է կիրառվում՝ Հոբ – 5 անգամ, Սաղմոսներ – 9 անգամ, և Առակաց – 3 անգամ:

Այս գրքում, թե ինչպես է այս խոսքը դիտարկվում, տարբեր տեսությունների համար տես՝ Ներածություն, Հեղինակը, Ը: Ես նախընտրում եմ #1: Աստվածաբանական այս կանխաենթադրությունը կլինի այն ցանցը, որի միջոցով ես կմեկնաբանեմ այս գիրքը:

❖ **«ամեն բան ունայնություն է»** Ուշադրություն դարձրե՛ք արմատին՝ «ունայնություն» (BDB 210 I), որը կիրառվում է 5 անգամ այս մի համարում: *Ժողովողի ձեռնարկը* UBS-ի կողմից ասում է, որ այս տերմինը պետք է հասկանալ որպես՝

1. անըմբռնելի
2. առեղծվածային
3. խորհրդավոր
4. անհնար հասկանալ

Ուստի այն փոխանցում է իրողությունը, որ կյանքը լի է անպատասխան հարցերով (էջ՝ 4): Իմաստության գիտակ մարդը սա հասկանալով կշարունակի վստահել Աստծուն և պահել Նրա պատվիրանները:

Սա վերաբերում է կյանքի անհայտ և անկանխատեսելի գործերին: Սա անկյալ մարդկության հետևանքն է, որը փորձում է կյանքն ապրել իրենց իսկ ուժերով՝ Աստծուց անկախ: Սա Անկումից մնացած վիճակն է (տես՝ Ծննդոց 3):

«Ամեն/բոլոր» (BDB 481) եբրայերեն տերմինը՝ հաճախ թարգմանվող «ամեն ինչ», տարածված բառ է, սակայն հաճախ կիրառվում է Ժողովողում (այսինքն՝ 9 անգամ 1-ին գլխում, 17 անգամ՝ գլուխ

2-ում, 13 անգամ՝ գլուխ 3-ում, և այլն): *Qoheleth* կիրառում է այս ներհատուկ լեզուն արտահայտելու իր աստվածաբանական շեշտադրությունը՝

1. Աստծո վերահսկողության և սուվերենության վրա
2. մարդու անարդյունավետության և անցողիկության վրա:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 78:34-39

34Երբ նրանց սպանում էր, փնտրում էին Նրան.
Ու հետ էին դառնում և առավոտ վաղ Աստծուն էին փնտրում:
35Ու հիշում էին, թե Աստված իրենց Վեմն էր
Եվ Բարձրյալ Աստված իրենց Փրկիչն էր:
36Սակայն իրենց բերանով շողոքորթում էին Նրան,
Իսկ իրենց լեզվով սուտ էին խոսում:
37Քանի որ իրենց սիրտը շիտակ չէր Նրա առջև,
Ու հավատարիմ չէին Նրա ուխտի մեջ:
38Բայց քանի որ Նա կարեկցությամբ լի էր,
Ներում էր նրանց հանցանքը ու չէր կործանում նրանց.
Իսկապես, հաճախ զսպում էր Իր բարկությունը
Եվ չէր գրգռում Իր ողջ զայրույթը,
39Քանի որ հիշում էր, թե նրանց մարմին են,
Քամի, որ անցնում է ու չի վերադառնում:

78:34-39 Այս պարբերությունը նկարագրում է փրկված իսրայելացիների կեղծ ապաշխարությունը և ՅԱՀՎԵԻ արձագանքը այդ երևույթին:

1. թվացյալ ապաշխարությունը, Սաղմ. 78:34-35
   ա. նրանք փնտրում էին Նրան
   բ. նրանք հետ էին դառնում Նրան
   գ. եռանդով փնտրում էին Նրա երեսը
   դ. նրանք հիշում էին, որ Աստված է նրանց Վեմը՝ Փրկիչը
2. նրանց իրական մտքերը՝ գործողությունները (Սաղմ. 78:36-37)
   ա. նրանք շողոքորթում էին Նրան՝ սուտ էին խոսում (Սաղմ. 78:36ա և բ, տես՝ Ես. 29:13)
   բ. նրանք հավատարիմ չէին Նրա ուխտին
3. ՅԱՀՎԵԻ արձագանքները (Սաղմ. 78:38-39)
   ա. Նա գթառատ է (տես՝ Ելից 34:6, Նեեմ. 9:17, Սաղմ. 103:8, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱ-ՅԵԼԻ ԱՍՏԾՈ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ</u>)
   բ. Նա ներում էր (բառացի՝ «ծածկում էր», BDB 497, KB 493, *Piel* ԱՆԿԱՏԱՐ)
   գ. Նա չէր բնաջնջում նրանց
   դ. Նա զսպում էր Իր բարկությունը (բառացի՝ «հետ էր պահում»)
   ե. Նա չէր գրգռում Իր ողջ զայրույթը
   զ. Նա հիշում էր, թե նրանք մարմին են (տես՝ Սաղմ. 103:14), որ այսօր այստեղ են և վաղը չկան

Սաղմոս 78:38-39 չի նշանակում, որ նրանք չէին դատվում (տես՝ Սաղմ. 78:34ա), այլ որ ՅԱՀՎԵՆ կատարելապես չբնաջնջեց նրանց:

Սաղմոս 78:38-39 գործածվում է ռաբբիական տարբեր գրքերում: Այն հանդիսանում է Աստծո բնավորության ամփոփում (տես՝ Ելից 34:6, Նեեմ. 9:17, Սաղմ. 103:8-14):

78:35 Ուշադրություն դարձրե՛ք Աստծո համար տրված անունների և տիտղոսների տարբերությանը:

1. *Էլոհիմ* (BDB 43, KB 52)
2. նրանց վեմը (տես՝ Սաղմ. 18:2, 19:14)
3. *Էլ* (BDB 42, KB 48)

4. *Էլիոն* (BDB 751, KB 832)
5. նրանց փրկիչը (տես՝ Սաղմ. 19:14):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 78:40-53

40Քանի՛ անգամ Նրան դառնացրին անապատում
Ու վշտացրին Նրան ամայի տեղում:
41Այո, ետ դարձան ու փորձեցին Աստծուն
Ու սահմանափակեցին Իսրայելի Սրբին:
42Չհիշեցին Նրա ձեռքը, *կամ* այն օրը, երբ փրկեց իրենց թշնամուց:
43Ինչպես Իր նշանները ցույց տվեց Եգիպտոսում
Ու Իր հրաշքները՝ Տայանիսի դաշտի մեջ.
44Արյան վերածեց նրանց գետերն ու հեղեղատները,
Որ չկարողանան խմել:
45Ճնաճանճեր ուղարկեց նրանց վրա,
Որ ուտեն նրանց, գորտեր, որ կործանեն նրանց:
46Նաև նրանց բերքը տվեց թրթուրին
Ու նրանց վաստակը՝ մորեխին:
47Նրանց որթատունկերը փչացրեց կարկտով
Ու նրանց վաստակը՝ մորեխին:
48Նրանց անասուններն էլ կարկտի մատնեց,
Իսկ նրանց հոտերը՝ կայծակի հարվածներին:
49Նրանց վրա թափեց Իր բարկության, զայրույթի,
Սրտմտության ու նեղության սաստկությունը՝
Չար հրեշտակներ ուղարկելով նրանց մեջ:
50Իր բարկության ճամփան բացեց,
Նրանց անձերը չխնայեց մահվանից,
Այլ նրանց կյանքը համաճարակի մատնեց:
51Ու բոլոր անդրանիկներին սպանեց Եգիպտոսում՝
Նրանց զորության առաջին պտուղներին՝ Քամի վրաններում:
52Իսկ Իր ժողովրդին ոչխարների պես հանեց
Ու նրանց հոտի պես առաջնորդեց անապատի միջով:
53Եվ ապահով տարավ նրանց, այնպես որ չվախեցան,
Իսկ ծովը ծածկեց նրանց թշնամիներին:

78:40-53 Այս պարբերության մեջ կարծես թե շփոթություն կա իսրայելացիների վրա ՅԱՀՎԵԻ դատաստանի (տես՝ Սաղմ. 78:40-42) և Ելիցի ժամանակ Եգիպտոսի վրա Նրա դատաստանի միջև: Պատուհասները, որոնք ակնարկվում են Սաղմ. 78:43-51-ում, ուղղված էին ըմբոստացած եգիպտացի առաջնորդների դեմ:

Անհավատա Իսրայելին դատելու փոխարեն (այսինքն՝ անապատում դեգերելու շրջանում, տես՝ Սաղմ. 78:40-43), ՅԱՀՎԵՆ նրանց հովվում էր (տես՝ Սաղմ. 78:52-53):

Նկատեք, թե ինչպես՝ Իսրայելի անհավատությունը բնութագրվում:

1. նրանք ապստամբեցին Նրա դեմ, Սաղմ. 78:40
2. նրանք վշտացրեցին Նրան, Սաղմ. 78:40
3. նրանք փորձեցին Նրան, Սաղմ. 78:41
4. նրանց ցավ պատճառեցին Նրան, Սաղմ. 78:41
5. նրանք չհիշեցին Նրա զորությունը, նշանները, հրաշքները, Սաղմ. 78:42

78:44-51 Այս համարները նկարագրում են Եգիպտոսի պատուհասները:

1. ջուրը, արյան գետը՝ Ելից 7:17-19
2. ճանճերը՝ Ելից 8:16-18

3. գորտերը՝ Ելից 8:2-6
4. մորեխները՝ մարախները, Ելից 8:21, 10:4-6
5. կարկուտը՝ Ելից 9:18
6. ժանտախտը՝ հիվանդությունը, Ելից 9:8-10
7. առաջնեկների մահը՝ Ելից 11

Հերթականությունն ու թիվը ստույգ չեն, սակայն ըստ երևույթին Ելից 7-11-ի պատուհասները հենց այն է, ինչին անդրադառնում է այս հատվածը, եթե միայն դրանք չեն դարձել ՅԱՀՎԵԻ դատաստանի համար դարձվածքներ:

78:49 Այս համարը կիրառում է տերմինների լիտանիա, որպեսզի նկարագրի Աստծո բարկությունը (Սաղմ. 78:38):

1. բարկություն – BDB 354 ԿԱՉՄՈՒԹՅԱՄԲ BDB 60 I
2. զայրույթ – BDB 720
3. սրտմտություն – BDB 276
4. նեղություն – BDB 865
5. չար հրեշտակների խումբ

Հինգերորդ կետը դարձվածք է, որն անձնավորում է Աստծո բարկության տարրերը: Ելիցում առաջնեկների մահվան պատմությունը արյամբ չնշված տներում, Աստված է, որ թույլ է տալիս այս իրողությունը (տես՝ Ելից 11:4, 12:12): Սա հետագայում դարձավ Հուդաիզմում «Հրեշտակի մահը» (այսինքն՝ Սամայել կամ Ազրայել) հասկացությունը, սակայն Աստվածաշունչը հատուկ կերպով չի նշում նրան, չնայած որ 2 Թագ. 24:16, 4 Թագ. 19:35, 1 Մնաց. 21:15, Եսայի 37:36 ակնարկում են մեկին: Ռաբբիները նաև պնդում են, որ Սաղմ. 89:48 վերաբերում է նրան (այսինքն՝ Թարգումը՝ «տեսնելով մահվան հրեշտակին»): Աստվածաբանական իմաստն այն է, որ Աստված, ոչ թե Սատանան կամ հրեշտակն է վերահսկում մահը:

78:50 Սա դարձվածք է ինչ-որ գործողության պատրաստության համար: Հաջորդ երկու տողերը ցույց են տալիս, որ այս դեպքում սա հանդիսանում էր ՅԱՀՎԵԻ դատաստանը:

78:52 Աստված որպես հովիվ Ասափի Սաղմոսներում հանդիսանում է պարբերաբար կրկնվող թեմա: Տես Սաղմոս 77:20-ի գրառումը:

78:52 Այս համարն ունի երկու պատմական ակնարկ:

1. «նրանց առաջնորդեց» վերաբերում է փառքի *Շեխինայի* ամպը, որը առաջնորդում էր իսրայելացիներին (տես՝ Ելից 13:21, 14:19,24, 33:9,10):
2. «ծովը ծածկեց նրանց թշնամիներին» վերաբերում է Կարմիր Ծովի բաժանմանը և ապա այդ նույն ջրերի վերադարձով եգիպտական արքայական զինվորների և կառքերի խեղդամահ լինելը (տես՝ Ելից 14-15):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 78:54-64

54Ու նրանց տարավ Իր սրբարանի սահմանը՝
Այն լեռը, որ Իր աջով էր ձեռք բերել:
55Նրանց առջևից հեթանոսներին վռնդեց
Եվ վիճակով ժառանգություն բաշխեց նրանց
Ու Իսրայելի ցեղերին իրենց վրաններում բնակեցրեց:
56Բայց նրանք փորձեցին ու դառնացրեցին Բարձրյալ Աստծուն
Ու Նրա վկայությունները չպահեցին:
57Այլ հետ դարձան ու իրենց հայրերի պես անհավատարմաբար վարվեցին,
Շեղվեցին խաբեբա աղեղի պես:
58Քանի որ Նրան բարկության մղեցին իրենց բարձր տեղերով
Ու Նրա նախանձը շարժեցին իրենց կուռքերով:
59Երբ Աստված լսեց, զայրացավ ու մեծապես անարգեց Իսրայելը:

60Այնպես որ՝ լքեց Սելովի խորանը՝
Այն վրանը, որ կանգնեցրել էր մարդկանց մեջ:
61Նրա զորությունը գերության մատնեց,
Նրա փառքը՝ թշնամիների ձեռքը:
62Նաև Իր ժողովրդին սրի մատնեց
Ու զայրացած էր Իր ժառանգության վրա:
63Կրակը ոչնչացրեց նրանց երիտասարդներին,
Ու նրանց աղջիկները կնության չտրվեցին:
64Նրանց քահանաները սրով ընկան,
Ու նրանց այրիները սուգ չարեցին:

78:54-64 Այս պարբերությունը արձանագրում է Ավետյաց Երկրի նվաճումը և բնակեցումը (տես՝ Ծնն.15:12-21): Քանանացիների ցեղերը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՂԵՍՏԻՆԻ ՆԱԽԱԻՍՐԱ-ՅԵԼԱԿԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ) պարտվեցին և վտարվեցին Աստծո կողմից, իրենց մեղքի պատճառով: Ցավոք միևնույն բանը պատահում է իսրայելացի ցեղերին:

78:55բ Հեսուի գիրքը՝ 12-19 գլուխները, նկարագրում են այդ երկրի գերբնական հատկացումը Հակոբի սերունդներին:

78:56-58 Պոեզիայի այս տողերը նկարագրում են Իսրայելի մեղքը և ապստամբությունը, որը շատ ավելի ահավոր էր իրենց հանդեպ Աստծո արածների պատճառով (տես՝ Ղուկաս 12:48):

1. նրանք փորձեցին Աստծուն, Սաղմ.78:56ա
2. նրանք ապստամբեցին Աստծո դեմ, Սաղմ.78:56ա
3. նրանք չպահեցին Նրա ուխտը, Սաղմ.78:56բ
4. նրանք իրենց թիկունքները դարձրին դեպի Աստված /ետ դարձան/, Սաղմ.78:57ա
5. իրենց հայրերի պես անհամավատարմաբար վարվեցին, Սաղմ.78:57ա
6. շեղվեցին խաբեբա աղեղի պես, Սաղմ.78:57բ
7. Նրան բարկության մղեցին քանանացիների կռապաշտությամբ, Սաղմ.78:58ա
8. նրանք շարժեցին Նրա նախանձը իրենց կուռքերով, Սաղմ.78:58բ

78:59-64 Այս համարները մկարագրում են, թե ինչ է արել Աստված Իսրայելի համար նրանց գործերի համեմատ (Սաղմ.78:56-58):

1. Նա զայրացավ
2. Նա մեծապես անարգեց Իսրայելը
3. Նա լքեց Սելովի խորանը (տես՝ 1 Թագ.4:11)
4. Նա թույլ տվեց, որ Իսրայելը պարտվի
5. Նա Իսրայելի մատնեց սրի
6. Նա զայրացած էր Իր ժառանգության վրա
   ա. կրակը լափեց երիտասարդներին
   բ. կույս աղջիկները հարսանիք չունեցան
   գ. քահանաները սպանվեցին
   դ. որբևայրիները չկարողացան սգալ

Մարդկային ընտրություններն ունեն հետևանքներ՝ թե ժամանակավոր, և թե՛ հավիտենական:

78:62 «Իր ժառանգությունը» Սա զուգահեռ է «Նրա ժողովուրդը» խոսքին (տես՝ Սաղմ.106:40): Այս նկարագրության բուն սկզբնաղբյուրը 2 Օր.9:29 համարն է: Սա էլ շատ այլ նմանատիպ նկարագրությունների, ընտանեկան ուղղվածություն ունի:

78:63 «կրակ» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 78:65-72

65Ապա ՏԵՐՆ արթնացավ, ինչպես քնից,
Ինչպես գինուց սթափվող մի զորավոր մարդ,
66Ու Իր թշնամիներին ետ հարվածեց՝
Հավիտենական նախատինք տալով նրանց:
67Համենայն դեպքս, Նա մերժեց Հովսեփի վրանը
Ու չընտրեց Եփրեմի ցեղը,
68Այլ ընտրեց Հուդայի ցեղը՝ Սիոն լեռը, որ սիրեց:
69Իր սրբարանը շինեց բարձր *պալատների* պես,
Գետնի պես, որ հավիտենապես հաստատեց:
70Նաև Իր Դավիթ ծառային ընտրեց
Ու վերցրեց նրան ոչխարների փարախներից:
71Նորածին գառնուկ ունեցող մաքիներին հետևողին բերեց,
Որ հովվի Իր Հակոբ ժողովրդին
Ու Իր ժառանգությունը՝ Իսրայելին:
72Նա էլ հովվեց նրանց Իր սրտի ազնվությամբ
Ու Իր ձեռքերի հմտությամբ առաջնորդեց նրանց:

78:65-72 Այս ամփոփիչ պարբերությունը նկարագրում է, թե ինչպես է Աստված ետ դառնում Իր բարկությունից և շարունակում Իր փրկագործության նպատակները (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

1. Աստված նկարագրված է որպես անձ, որն արթնանում է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՄՈՐՖԻԶՄ)):
2. Նա պարտության է մատնում Իր ժողովրդի թշնամիներին
3. Նա նրանց տալիս է հավիտենական նախատինք
4. Նա վերականգնում է ցեղերի կարգը որպես առաջնորդների վայրեր՝
   ա. մերժում է Հովսեփին և Եփրեմին
   բ. ընտրում է Հուդային (տես՝ Ծնն. 49:8-12, 2 Օրինաց 33:7):
5. Նա ընտրում է Դավթին որպես Իր հատուկ առաջնորդը (և նրա սերունդներին, տես՝ 2 Թագավորաց 7):
   ա. նկարագրվում է որպես հովիվ
   բ. ունի շիտակ սիրտ
   գ. ունի հմուտ ձեռքեր

Հյուսիսային ցեղերի մերժման և Հուդայի ցեղի ընտրության ակնարկով կարծես թե այս Սաղմոսի վերջնական ձևը գրվել է Իսրայելի, Եփրեմի, Սամարիայի անկումից հետո՝ Ք.Ա. 722թ. Ասորեստանի կողմից:

Այս պարբերությունը լավ օրինակ է, թե ինչպես է Աստված հաստատում Իր գերիշխանությունը: Մշակութային ակնկալիքը փոխվում է՝ ցույց տալու Աստծո վերահսկողությունը:

1. Հուդան և Եփրեմը
2. Սիոնը և Սելովը
3. Դավիթը և ոչ թե Հեսսեի մյուս որդիները

Սա աստվածաբանորեն նման է, որ բոլոր Նահապետներն ամուսնացան չբեր կանանց հետ: Նրանց զավակները գերբնական-բնական պարգևներ էին Աստծուց: Նա վերահսկում է ժամանակը, տարածությունը, պատմությունը, ընտրությունը և փրկությունը: